

ԳՈՅԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ԲԱՅԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԻՄ

ԼՈՒՇԱ ՍԱՐԳԱՅԱՆ

Հայոց լեզվի բոլոր փուլերում բայն ունի առանձնահատուկ ձևավորում: Ինչպես դիմավոր, այնպես էլ անդեն ձևերում այն հանդես է գալիս բաղադրյալ կառուցվածքով, այսինքն՝ կազմված է լինում հիմքից և բայական վերջավորությունից: Բայական հիմքերը կարող են լինել և բուն բայական արմատներ, և արմատներ, որոնք լեզվի մեջ գոյություն ունեն այլ խոսքինասային արժեքով: Քանի որ լեզվում նոր արմատներ չեն ստեղծվում, ժամանակակից հայերենում այլևս բուն բայարմատներից նոր բայեր չեն կազմվում, և նոր հասկացություններ անվանելու համար լեզուն դիմում է բառակազմական այլ միջոցների: Ժամանակակից հայերենի անորոշ դերբայի **-ել** և **-ալ** վերջավորությունները, բացի դերբայական ձևություններ լինելուց, ունեն նաև բայակազմից գործառույթ, այսինքն՝ դրանցով բայեր են կազմվում ոչ միայն բայարմատներից, այլևս այլ արմատներից, այսինքն՝ հայերենում այլ խոսքի մասերի վերածումը բայի ենթադրում է հատուկ բայական մասնիկավորում: Նոր բայեր կազմվում են նաև փոխառյալ արմատներից, որոնք ենթարկվում են հայերենին հատուկ բայական մասնիկավորման: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բայացմանը առավել ակտիվ մասնակցում են անուն խոսքի մասերը՝ գոյականները և ածականները:

Այս հոդվածում մեր նպատակն է քննել գոյական նախատիպերից կազմված բայերը: Ժամանակակից հայերենում գոյական խոսքի մասից բայերը կազմվում են համադրական և վերլուծական տիպերով: Հայտնի իրողություն է, որ ժամանակակից հայերենի վերլուծական կազմության բառերը գերազանցապես բայական են: Վերլուծական (հարադրավոր) բայերի մեջ գոյական հարադրինները կարող են լինել ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ, ունենալ ուղիղ և թեր հոլովածներ, ընդ որում, որպես բայական մաս հանդես են գալիս իիմնականում ածել, ամել, ամցնել, առնել, թերել, գալ, գործել, դարձնել, դնել, ընկնել, մտնել, տալ, քաշել բայերը, ինչպես՝ աչքի ընկնել, ելումուտ ամել, գլուխ գալ, գործից գցել, լեզու համել, խելքին փչել, հարցությորժ ամել, մտքից համել, խոսքով ընկնել, ուշադրություն դարձնել, փառք տալ, քնով ամցնել և այլն: Ժամանակակից հայոց լեզվում անվանական հարադրով վերլուծական բայերը աչքի են ընկնում իրենց դարձվածային արժեքով, այսինքն՝ փոխարերական իմաստի արտահայտմամբ, ինչպես՝ աչք տալ, գլխի ընկնել, գլուխ թերել, գլուխ գալ, սիրտ ամել և այլն: Մեծ թիվ են կազմում նաև ուղղակի իմաստ արտահայտող հարադրավոր բայերը, որոնք հանդես են գալիս այսպես կոչված նկարագրական գործառությով, և պատահական չեն, որ նման կազմությամբ բայերը հաճախ ունենում են գուգահեռ նույնահիմք համադրական ձևեր՝ իմաստային որոշ տարրերություններով, ինչպես՝ գործ ամել – գործել, երդում տալ – երդել, խաղ ամել – խաղալ, միտք ամել – մտածել, փորձ ամել – փորձել և այլն: Հարկ ենք համարում

նշել, որ եթե գրաբարում ընդունված էր գոյականի թեքված ձևերից համարական բայեր կազմելը, ինչպես՝ արկանել, սերմանել և այլն, ապա ժամանակակից հայերենում գոյականի թեքված ձևերից բայեր գրեթե չեն կազմվում, և հանդիպող օրինակներում էլ գոյականը հոլովված ձևով ունի ածականական արժեք, ինչպես՝ գինովանալ, համովանալ, սրտովանալ և այլն:

Ժամանակակից հայոց լեզվում գործում են պարզ գոյականներով կազմված բազմաթիվ բայեր, որոնց մեծագույն մասը ժամանակակից հայերենը ժառանգել է հայերենի զարգացման նախորդ փուլերից, ինչպես՝ արմատանալ, բուրել, գրկել, թղթել, լճանալ, ծիսալ, շնչել, շղղալ, սիրել, վիծել, տպել և այլն: Այստեղ հաճախ առաջ է գալիս բայահիմքի բայական կամ անվանական ծագման վիճելի հարցը: Թեև, ինչպես նշում է Յր. Աճառյանը, «Վեճը իր վճռական արդյունքին չէ հասած»¹, այնուամենայնիվ հայագիտության մեջ փորձեր են արվել առաջադրելու այնպիսի դրույթներ, որոնք հնարավորություն են տալիս որոշ պարզություն նոցնելու այդ բարդ խնդրում:

Օրինակ՝ Ա. Ա. Աբրահամյանը, մանրամասն անդրադառնալով լեզվաբանության պատմության մեջ խոսքի մասերի ծագման մասին եղած տեսակետներին և հարելով Ա. Ա. Պոտեբնյայի այն կարծիքին, թե որքան գնում ենք պատմության խորքերը, այնքան վերանում են բայի և անվան տարբերությունները², առաջադրում է հայերենում բայարմատը այլ արմատներից տարբերակելու հինգ միջոց կամ չափանիշ:

1. **-Անալ** վերջավորությամբ կազմված բայերը ըստ ծագման միշտ հաջորդում են համապատասխան արմատներին:

2. Յնչյունափոխված հիմքով բայերը կազմված են նախապես լեզվում գոյություն ունեցող չինչյունափոխված արմատներից կամ արմատական բառերից:

3. Կամկած չեն հարուցում բացահայտորեն կոնկրետ առարկաներ անվանող գոյականները, ինչպես՝ թել-թելել, թամբ-թամբել, մաշկ-մաշկել, յուղ-յուղել, քար-քարել և այլն, որոնք դարձել են բայակազմական հիմք:

4. Նորակազմ բայերի ժամանակային հաջորդումը անուններին (եթե հնարավոր է պարզել), ինչպես՝ կտակ-կտակել, տենդ-տենդել և այլն:

5. Պատմահամենատական մեթոդով կատարված ստուգաբանությունների հետևանքով վեր հանված տվյալների օգտագործումը³. Սանրամասն քննելով վերը բերված չափանիշները և ընդգծելով նաև նրանց թերի կողմերը՝ Ա. Աբրահամյանը իրավամբ գտնում է, որ ավելի արդյունավետ կարող է լինել միաժամանակ բոլոր միջոցների կիրառումը:

Սույն խնդրին այս կամ այն կերպ անդրադրձել են այլ լեզվաբաններ և՝ փորձելով առաջադրել բայարմատը անվանական արմատից տարբերակելու միջոցները: Լ. Յովսեփյանը գտնում է, որ բուն բայական արմատները հեշտ է ճանաչել այն ռեաքտերում, եթե դրանցից կազմված գոյականները ունեն գոյականակերտ ածանց, ինչպես՝ վագք, դիրք, խոսք և այլն⁴:

Նա նշում է նաև, որ բոլոր սոսկածանցավոր բայերի արմատները հիմնականում բայական են, ինչպես՝ առնում, արբենամ, բուժանեմ, բուսա-

¹ Յր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, գիրք Ա, Եր., 1959, էջ 3:

² Տե՛ս Ա. Աբրահամյան, Բայր ժամանակակից հայերենում, գիրք 1, Եր., 1962, էջ 37:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 76-116:

⁴ Տե՛ս Լ. Յովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 299:

ԱԵՄ, ԳՏՈԱՆԵՄ, ԵՐԼԿԱՀԻՄ, ԶԱՐԹՅԻՄ և այլն: Բնականաբար, այստեղ խոսքը չի վերաբերում **-աճ+ալ** վերջավորությամբ կազմված այն բայերին, որոնք կազմվել են այս մասնիկի գործուն բայակերտ վերջավորություն դառնալուց հետո: Ըստ Լ. Շովանի հիմնականի՝ հիմնական դարի լեզվավիճակում սոսկածանցներով նոր բայեր չեն առաջանալ, այստեղ ածանցներն ունեն ձևաբանական-հիմքակազմական, բայց ոչ բառակազմական արժեք⁵.

Սույն եզրահանգմանը հանգել ենք նաև մենք մեր ուսումնասիրությունների արդյունքում: 82 սոսկածանցավոր բայերի ստուգաբանական քննությունը ցույց է տվել, որ իսկապես սոսկածանցավոր (**աճ, են, մ, չ, նչ** ածանցներով) բայերի արմատները ունեն բայական ծագում, այսինքն՝ հնդեվրոպական հիմք լեզվից անցում կատարելիս այդ արմատները բայացել են անպայման այդ ածանցներով, ինչպես բուսանիմ բայի բոյս արմատի դեպքում, «որի առաջին և հիմնական նշանակութիւնն է «աճիլ, մեծանալ (մանաւանդ բոյսի)». ... Հնդեվրոպական միւս ճիւղերի մէջ այս արմատը ստանալով «լինել, գոլ» նշանակութիւնը, դարձել է էական բայ, այսպէս՝ ... ռուս. նոյտ ... գերմ. bīn, անգլ. be «լինել» և այլ բազմաթիւ ձևեր»⁶:

Գ. Զահոնիկյանը բայի ելակետային ձևի մասին խոսելիս անդրադառնում է բայարմատների առանձնացմանը և նշում, որ որոշ դեպքերում դժվար կամ էլ անհնար է դրանք որոշելը, որովհետև բայի «մաքուր» արմատական հիմքը չի պահպանվել առանձին գործածությամբ⁷: Արմատական բայերի իր կազմած ցանկում նա նշում է մոտավորապես 1180 արմատական բայեր, որոնց մեջ ընդգրկվել են նաև **աճ, են, մ, չ, վ** ածանցներով, կրկնավոր, զգիտակցվող բաղադրիչներով բայերը, և ընդգծում է, որ շուրջ երեք հարյուր բայարմատներ հնչյունափոխված ձևով կամ նույնությանը գործածվում են նաև որպես բայանուն գոյականներ, և դրանց խոսքինային տարբերակումը որոշ պայմանականություն ունի⁸:

Ժամանակակից հայերենում **ե** խոնարհման բայերը մեծամասնություն են կազմում: Այս մասնիկը առավել ակտիվ է նաև գոյական հիմքերից նոր բայեր կազմելիս, որը բխում է մասնիկի ընձեռած իմաստային լայն հնարավորություններից: -**ել** մասնիկով ձևավորված գոյականակազմ բայերը արտահայտում են՝

ա. Նպատակամիտվող ակտիվ գործողության գաղափար, որը կատարվում է այն գործիքի միջոցով, որի անունն է բայի հիմքում ընկած գոյականը, ինչպես՝ արդուկել, չափել և այլն:

բ. Գործողություն, որի հիմքում ընկած առարկան մտովին ներկայանում է իբրև գործողության անմիջական օբյեկտ, ինչպես՝ կամքել, նվիրել և այլն:

գ. Որևէ նյութով պատելու, ամբողջովին կամ մասամբ օժտելու ակտիվ գործողություն՝ ըստ այն գոյականների, որոնք ընկած են այդ բայերի հիմքում, իմշապես՝ ասֆալտել, մեղրել, քարել և այլն:

դ. Վերածելու իմաստ ունեցող ակտիվ գործողություն, որի հիմքում ընկած առարկան ստացվում է իբրև արդյունք, ինչպես՝ ապիստել, հրդեհել, փնցել և այլն:

⁵ Տե՛ս նոյն տեղը, էջ 300:

⁶ Յի, Աճարյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Եր., 1971, էջ 470:

⁷ Տե՛ս Գ. Զահոնիկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 199:

⁸ Տե՛ս Գ. Զահոնիկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 47:

Ե. Որևէ անձի գբաղմունքի, արհեստի, պաշտոնի գործադրման հետ կապված ակտիվ գործողություն, ինչպես՝ բժշկել, դասախոսել, լրտեսել և այլն:

գ. Մի բանով գբաղվելու գործողություն, որն արտահայտվում է բայի կազմության մեջ եղող գոյական անվան միջոցով, ինչպես՝ գրոհել, թեյել, կրել և այլն:

է. Մի դրության, վիճակի մեջ գտնվելու գաղափար, որի հմաստը կաբայի կազմությանը մասնակցող գոյական անվան մեջ, ինչպես՝ անձրևել, գիշերել, ծաղկել, ծմնել, շնչել և այլն⁹:

Բայի փոխակերպվելիս գոյականը կառուցվածքային տեսակետից սահմանափակություն չունի: Բայակազմությանը կարող են մասնակցել ինչպես պարզ, այնպես էլ բարդ և ածանցավոր գոյականները, որոնց սովորաբար կցում է -ել մասնիկը: Առավելապես բայակազմությանը մասնակցում են իսկական բարդությունները, ինչպես հոդակապով, այնպես էլ անհոդակապ կաղապարներով, օրինակ՝ ազդանշանել, բանավիճել, բանաստեղծել, բարեգործել, բուրվառել, գեղանկարել, գծանկարել, գիպսապատճենել, գլխագրել, գովազդել, դասախոսել, ժամերգել, դեկավարել, ծալատամարտել և այլն:

Կցական բարդությունները բայանում են հիմնականում հարադրման եղանակով, ինչպես՝ անցուղարձ անել, առուժախ անել, առևտուր անել, ելումուտ անել, հարցուփորձ անել և այլն: Կցական բարդությունները բայանում են նաև համադրական տիպով՝ -ել մասնիկով, ինչպես՝ ծաղրուժանակել, ելսէջել, երթևեկել, եռուզեռել և այլն: Կրկնավոր հիմքերով համադրական գոյականները բայանում են ինչպես -ել, այնպես էլ -ալ մասնիկներով, օրինակ՝ թրոռալ, գրգռել, դայլայլել, կոկտալ, հեղեղել, սարսոալ և այլն:

Վերջածանցավոր գոյականները ևս մասնակցում են բայակերտմանը՝ սովորաբար -ել մասնիկով, ինչպես՝ մեկնաբանել, օղակել, թիակել, կալանել, շրջանակել, շաշյունել, խարտոցել, ծամփորդել, մեկնարկել և այլն:

Այլ խոսքի մասերից գոյական կերտող նախածանցներ ժամանակակից հայերենը չունի: Ինչպես նշում է Գ. Զահուկյանը, «հայերենի բուն (ոչ ժխտական) նախածանցները խոսքինասային փոխակերպման գործառույթ չեն կատարում: Այդպիսի գործառույթը հատուկ է վերջածանցներին»¹⁰:

Կան կաղապարներ, որտեղ նախածանցները կցվում են գոյականական նախատիպին՝ կազմելով նոր գոյականներ, ինչպես՝ արտասահման, արտանկար, արտաշխարհ, ներաշխարհ, ենթասպա, ենթաշրջան, ընդհատակ, համակարգ, համաժողով, համակուրսեցի, մակերես, շաղկապ, պարագիծ, վերակարգ, տարանկյուն, տարակույս, փոխանուն և այլն: Այսպիսի՝ R+N (նախածանցավոր գոյական) կաղապարով գոյականներից կարող են կազմվել բայեր, ինչպես՝ արտասահմանել, արտանկարել, հակագործել, հակաշռել, համակարգել, շաղկապել, պարագծել, տարակուսել և այլն: Ինչպես երևում է բերված օրինակներից, դրանց մի մասը հնարավոր է ներկայացնել նաև նախածանց + գործող բայ կաղապարով, ինչպես՝ արտա-նկարել, ընդ-օրինակել, հակա-գրոհել, համա-կարգել և այլն: Խսկ ար-

⁹ Տե՛ս **Ս. Գալստյան**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 246–247, նաև՝ **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 64–66:

¹⁰ Գ. Զահուկյան, ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 507:

տասահման-ել, պարագծ-ել, տարակուս-ել բայերը անվիճելիորեն կազմված են նախածանցավոր գոյական + ել կաղապարով:

Եդ. Աղայանը կերպածանցների շարքում քննում է նաև վեր-, ներ-, արտածանցները՝ պնդելով, որ դրանք ոչ միայն առհասարակ բառակազմական ածանցներ են, այլև բայածանցներ¹¹: Վեր-, ներ-, արտ- նախածանցները, իսկապես, լեզվի մեջ գոյություն ունեցող բայերից կազմում են նոր բայեր՝ հաղորդելով նորակազմ բայերին այնպիսի ածանցական իմաստներ, որոնք հատուկ են տվյալ ածանցի բովանդակությանը և հակադրվում են բայածանցներին նրանով, որ վերջիններիս արտահայտած իմաստները քերականական են: Եվ չնայած վերոնշյալ ածանցներին են. Աղայանի կողմից տրված իմաստային բնորոշումներին (Երկրորդության բայեր, ուղղվածության բայեր), այս ածանցները հայ քերականագիտության մեջ միանշանակ չեն ընկալվել որպես բայակազմական ածանցներ¹², թեև անհերքելի է, որ դրանցով նոր բայեր են կազմվում:

Մինչև այժմ քննում էինք կազմության տեսակետից պարզ բայերի կաղապարներ: **-ել, -ալ** բայակերտ վերջավորությունների հետ հաճախ բայակերտմանը մասնակցում են բայական ածանցներ, որոնք դրվում են **-ել, -ալ** վերջավորություններից առաջ: Բաղադրական-քերականական բայածանցները (**-ան-, -են, -ն-, -չ-**) կազմում են բայեր, որոնք լեզվի մեջ, ինչպես արդեն ասացինք, գոյություն ունեն հատկապես այդ ածանցներով բաղադրված: Նայ քերականագիտության մեջ առկա է այն կարծիքը, թե այս ածանցները բային նոր երկրորդական ածանցական իմաստ չեն ավելացնում¹³: Դրանից, սակայն, այս ածանցների գործառական դերը չի կորչում, քանի որ այս ածանցները, լինելով բայական բառույթի բաղադրիչներ, միաժամանակ հանդես են գալիս որպես համապատասխան բայերի հիմքակազմական բաղադրիչներ, և այս ածանցների առկայությունը կան բացակայությունը պայմանավորում է ներկա և անցյալ հիմքերի հակադրությունը: Եվ **-են-, -ն-, -չ-** ածանցներով, ինչպես արդեն վերը նշեցինք, այլևս նոր բայեր չեն կազմվում¹⁴: Ժամանակակից հայերենում բաղադրական-քերականական ածանցներից գործուն է միայն **-ան-** ածանցը, որը **-ալ** դերբայական վերջավորության հետ (**-անալ**) ակտիվորեն նոր բայեր է կազմում գերազանցական անվանական հիմքերից: Այս ածանցը, բացի գուտ բաղադրական լինելուց, նորակազմ բայերին հաղորդում է վերածվելու, փոխակերպվելու իմաստ¹⁵, որը տեսականորեն լայն հնարավորություն է տալիս նոր բայեր կազմելու համար, ինչպես՝ *աքլոր-աքլորանալ, առյուծ-առյուծանալ, գագ-գագանալ, գայլ-գայլանալ, ծով-ծովանալ, սյուն-սյունանալ, վարպետ-վարպետանալ* և այլն:

Ընդհանրապես նկատելի է, որ գոյականից **-անալ-**ով կազմված բայերը սովորաբար ունենում են նաև փոխաբերական իմաստ, որտեղ գոյակա-

¹¹ Տես Եդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր. 1967, էջ 311:

¹² Գ. Զահուկյանը բայի կազմության կաղապարը քննելիս քերում է բայակազմից նախածանցների ավելի ընդարձակ շարք (տես Գ. Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, էջ 171):

¹³ Տես Մ. Աբելյան, Աշխարհաբարի քերականություն, Կաղադական պատմություն, 1906, էջ 92:

¹⁴ Տես Լ. Յովենիյան, նշվ. աշխ., էջ 300:

¹⁵ Սակայն մի շարք բայեր, կազմված լինելով **-անալ** վերջավորությամբ, չեն արտահայտել վերածման օպակափառը կամ դեռ վաղ ժամանակներից այն աստիճանաբար բուլացել են, և ածանցը մնացել է միայն բաղադրական նշանակությամբ, ինչպես՝ գոյանալ, գոյանալ, գարգանալ, գարմանալ, զլանալ, ընթանալ, իմանալ, խոյանալ, ծառանալ, կայանալ, հանդիսանալ, հեռանալ, հիանալ, հղանալ, սքանչանալ և այլն:

նը հանդես է գալիս ածականական արժեքով՝ որպես հատկանիշի անում¹⁶, ինչպես՝ աղբյուրամալ «1. Աղբյուր դառնալ: 2. (փխր.) Հորդանալ, առատահոս դառնալ»: Ծովանալ բայի տասներկու իմաստներից ինը փոխաբերական է: Օղանալ «1. Օդ դառնալ, գազանալ, օդային զանգվածի վերածվել: 2. (փխր.) Գոլորշանալ: 3. (փխր.) Յօդս ցնդել, ի դերև ելնել»:

Ածանցագուրկ տարբերակների կողքին -անալ-ով կազմությամբ բայերում հատկապես ընդգծվում է վերածության իմաստը, ընդ որում՝ երբեմն ածանցագոր և ածանցագուրկ տարբերակները ունենում են բառիմաստի տարբերություններ, այսինքն՝ աստիճանաբար խզվում է նրանց միջև եղած իմաստային կապը, ինչպես՝ ծառայել – ծառայանալ, ջերմել – ջերմանալ, գիշերել – գիշերանալ և այլն:

Դայ քերականագիտության մեջ -ցն- և -վ- սեռանիշ ածանցները կցվում են գործող բայերին՝ հաղորդելով գերազանցապես պատճառականության և կրավորականության քերականական իմաստներ, այսինքն՝ բայական նոր միավոր չեն ստեղծում:

Սակայն -ցն- ածանցը ժամանակակից հայերենում բացի քերականական ածանց լինելուց -ել բայակերտ վերջավորության հետ մասնակցում է օտարալեզու՝ հատկապես ռուսերենից փոխառյալ բայերի կազմությանը, ինչպես՝ մօնուազությունը – մորիլիզացնել, կոմինիրությունը – կոմինացնել, շաբակությունը – էվակուացնել, օկկուպությունը – օկուպացնել, դենուսությունը – դենուսացնել, շրջանացությունը – գլոբալ(հզ)ացնել և այլն:

Գ. Սևակը, մեծ առաջընթաց համարելով այս երևույթը, նշում է. «Պետք է ասեմ, որ դրանցով մի նոր դուռ բացվեց մեր լեզվի բառակազմության, մասնավորապես՝ բայափոխառության առաջ: Բանն այն է, որ հայոց լեզուն դարեր շարունակ զուրկ է եղել օտարազգի բայեր փոխառելու կարողությունից և անհրաժեշտության դեպքում դիմել է միայն նկարագրական կամ հարադրական միջոցներին»¹⁷:

-Ացնել վերջավորությունը գերազանցապես գործածական է այն բայերի փոխակերպման դեպքում, որոնց անվանական ձևերը ունեն -ացիա վերջածանցը, և դրանց հիմքերը առանձին գործածական չեն ինչպես հայոց լեզվում, այնպես էլ ռուսերենում, և փաստորեն դրանց -աց-ը բաղարկվում է -ացն-ի աց-ի հետ:

Երբեմն, սակայն, ռուսերենից փոխառյալ բայերը ձևավորվում են պարզապես արմատին -ել վերջավորության հավելմանբ (առանց -ացն-ածանցի), մանավանդ, եթե հայերենում արդեն կա փոխառյալ գոյականը, ինչպես՝ ածուրագրությունը – արստրահել, շտուտացությունը – հիպնոսել, մոնտայսությունը – մոնտաժել, որոպահությունը – պրոպագանիզել, բալսությունը – վալսել, պատրությունը – ցիտել և այլն:

Որուսերենից փոխառվող բայերի ձևավորմանը ժամանակակից հայերենում -ել բայակերտ վերջավորության հետ միասին մասնակցում է նաև -ավոր ածանցը՝ փոխարինելով ռուսերենի -օօս ածանցին և նրա տարբերակներին բնականաբար չարտահայտելով -ավոր ածանցի ընդհանուր բառակազմական (ածականակերտ) նշանակությունը, ինչպես՝ ատեսատավլորել, ավանսավորել, կոմպլեկտավորել, կոնսավեկտավորել, ֆինանսավորել

¹⁶ Տե՛ս Գ. Զահորելյան, ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքներ, էջ 523:

¹⁷ Տե՛ս Գ. Սևակ, ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 140-141:

այլն: **-Ավոր** ածանցի բայակազմական դերը նկատելի է նաև հայերեն մի քանի անվանական արմատներից կազմված բայերում՝ պարենավորել, սարքավորել, դասավորել, կահավորել, տեղավորել, հացավորել, բազավորել, նորակազմ՝ անձնագրավորել, հայտավորել և այլն: Ի դեպ, պարենավորել, կահավորել բայերը այսպիսի կազմությամբ ավանդվել են գարաբարից: Իսկ տեղավոր ածականը թեև հանդիպում է գրաբարում, սակայն համապատասխան բայը չի գործածվում, բացի այդ՝ իմաստով չեր էլ կարող ծագած լինել այդ ածականից: Դասավոր ածականը, ի տարբերություն ժամանակակից հայերենի, դասավորել բայի հետ գրաբարում գործածական է եղել: Փաստուեն կարելի է ասել, որ **-ավոր** ածանցի բայակազմական նշանակությունը խորթ չի եղել հայերենին, իսկ փոխառվող բայերի փոխակերման ժամանակ գուցե դեր է խաղացել հնչյունական նմանությունը, և սույն ածանցի միջոցով հայերենը ձգտել է հնարավորինս արտահայտել որևէ ածանցի և նրա տարբերակների իմաստները: Այս կազմության բայերը ունեն նախատիպի արտահայտած առարկայով օժտելու գաղափար, և փաստորեն այս հանգամանքը հաշվի առնելով՝ պրոֆ. Է. Աղայանը այս ածանցը դասել է բայածանցների շարքը և նման կազմությամբ բայերը կոչել է օժտման բայեր¹⁸:

Դայ քերականագիտության մեջ բայական **-վ-** ածանցը համարվում է սեռանիշ ածանց: Սակայն ժամանակակից հայերենում **-վ-** ածանցի գործառույթը միատարր չէ: Ինչպես նկատել է Ա. Աբրահամյանը, լինում են դեպքեր, երբ ներգործական սեռի բայը, **-վ-** ածանց ստանալով, կրավորականություն, այսինքն՝ կրելու գաղափար չի արտահայտում, ինչպես՝ «ժողովուրդը հավաքվել էր իրապարակում»¹⁹: Ժամանակակից հայերենում գործածական են նաև մի շարք կրավորածն չեզոք բայեր, որոնցում **-վ-** ածանցը հանդես է գալիս բառակազմական-բաղադրական նշանակությամբ, այսինքն՝ մասնակցում է այդ բայերի ծևակորմանը, ինչպես՝ բնակվել, գժվել, գժովել, թաքնվել, համարձակվել: Այս բայերում **-վ-** ածանցի առկայությունը հայոց լեզվի պատճական զարգացման հետևանք է (*բնակիլ-բնակուիլ-բնակվել*): Դայոց լեզվի արդի փուլում կրավորակերպ չեզոքների որոշ մասը գործավում է նաև ածանցագուրկ տարբերակով, ինչպես՝ բռնկվել // բռնկվել, համածայնել // համածայնվել, հանդարտել // հանդարտվել, վերաբերել // վերաբերվել, տրաքել // տրաքվել և այլն: Եթե վերաբերվել բայի դեպքում **-վ-** ածանցի առկայությամբ հնարավոր է ցույց տալ իմաստային մասնակի տարբերություն, ապա դժվար է տարբերություն գտնել մնացած զույգերի արտահայտած իմաստների միջև: Կենդանի խոսքում գերակշռում է նրանց կրավորածն գործածությունը, անգամ անտեսվում է վերաբերել // վերաբերվել զույգի իմաստային տարբերությունը:

Պետք է նշենք նաև, որ ժամանակակից հայերենում **-վ-** ածանցն ընդլայնել է իր բայակազմական դերը և **-ել** դերբայական վերջավորության հետ չեզոք սեռի նոր բայեր է կերտում գոյականական հինքերից, ինչպես՝ ալիքվել, բաղեղվել, բռունցքվել, բռումերանգվել, գետակվել, երակվել, խաչմերուկվել, մակարդակվել և այլն:

Քննելով նման կազմությամբ գոյականարամատ բայերը՝ կարող ենք փաստել, որ **-վել** վերջավորությամբ մի շարք բայեր նույն իմաստով ունեն կամ տեսականորեն հնարավոր է ունենան **-անալ-**ով զուգահեռ տարբե-

¹⁸ Տես Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 313-314:

¹⁹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 640:

րակներ, այսինքն՝ այդ բայերը արտահայտում են արմատի ցույց տված առարկան կամ առարկայի որևէ ընդգծված հատկանիշի վերածվելու, դառնալու գաղափար, ինչպես՝ արիլլեսվել, բլուրվել, բումերանգվել, գրանիտվել, երևանվել, զորքվել, խաչքարվել, օջախվել և այլն:

Մի շարք կազմություններում **-վել** վերջավորությունը ծառայում է վերլուծական կազմությամբ բայի կամ բայով բառակապակցության համադրական կազմության վերածվելուն, ինչպես՝ բաղեղվել՝ «բաղեղով պատվել», դաշինքվել՝ «դաշինք կնքել», խաչմերուկվել՝ «խաչածն հատվել», կայանվել՝ «կանգնելու տեղ՝ կանգառ գտնել, հանգրվանել», հայաստանվել՝ «Հայաստանում բնակվել, Հայաստանում ապրել», տիեզերքվել՝ «տիեզերքով մեկ տարածվել», ուլունքվել՝ «ուլունքներով զարդարվել» և այլ²⁰:

Այս կազմության բայերը գերազանցապես հատուկ են առօրյա-խոսակցական և գեղարվեստական լեզվին, որտեղ գոյական հիմքերով կազմված բայերը դարձել են առարկայական երևույթներից բխող գործողության՝ պրոցեսի պատկերավոր արտահայտության միջոցներ և ստացել են ոճական յուրահատուկ արժեք, ինչպես՝ *Փաստորեն դու էլ ես վրարվել* (Գր. թերթ, 26 հունիս, 2009, էջ 5), *Գիտեր՝ հոգու ցավը չի սպեղանվում, ու նրա բողած սպիները մնում են նույնքան շոշափելի, որքան կրծքի տակ մարմրող տառապանքը* (Գր. թերթ, 3 հունիս, 2009, էջ 5):

Գրաբարից ժամանգված մի շարք գոյականակազմ բայերում **-ել** վերջավորության հետ առկա է **-արկ-** մասնիկը, որը գրաբարյան արկանել բայի արմատն է, և դրանով կազմված հարադրավոր բայերը ժամանակի ընթացքում ծուլվել են հիմքին, ինչպես՝ ձեռն արկանել- ձեռնարկել, ի գործ արկանել- գործարկել և այլն: Այս ածանցը ժամանակից հայերենում գոյական նախատիպերից կազմում է նաև համադրական բայեր, որոնք գրաբարում գործածություն չունեին անգամ հարադրական ձևով, ինչպես՝ կանոնարկել, շահարկել, վիճարկել, դիտարկել, վանկարկել, լողարկել, լաստարկել և այլն:

Ժամանակակից հայոց լեզվում հանդիպում են մասնակի դեպքեր, երբ գոյականը բայի է փոխակերպվել **-ատ+ել** կաղապարով, ինչպես՝ *տողատել*, *մասնատել*, *թղթատել*, *ժառանգատել*, *ծարպատել* և այլն: Ակնհայտ է, որ բերված օրինակներում **-ատ-** չունի բազմապատկանա-սաստկացնող ինաստ և ոչ էլ ածականակերտ ածանց է (*տողատ*, *մասնատ*, *թղթատ*, *ժառանգատ*, *ծարպատ* ածականներ չկան)²¹: Այս **-ատ-** մասնիկը առաջացել է *հատ* արմատից առաջին բաղաձայնի անկումով և, ի տարբերություն բազմապատկանա ածանցի արտահայտած սաստկացնող, ուժեղացնող ինաստի, արտահայտում է «անջատելու, զատելու» իմաստ:

Գոյականները համադրական եղանակով հաճախ բայանում են **-բանել**, **-գործել**, **-զատել**, **-զերծել**, **-պատել** և նման այլ բայերի միջոցով, ինչպես՝ *լուսաբանել*, *գոյարանել*, *գովարանել*, *փառարանել*, *լորրիագործել*, *շահագործել*, *գազագերծել*, *մաքսագերծել*, *շանթագերծել*, *սահմանազատել*, *եզրապատել*, *աստառապատել*, *ասֆալտապատել*, *նիկելապատել* և

²⁰ Օգտվել ենք Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ից (Եր., 1976), Ս. Էլյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարան»-ից (Եր., 2002) և Փ. Սեյբիսամյանի «Նոր բառերի բացատրական բառարան»-ից (Եր., 1996):

²¹ Տե՛ս Գ. Զահուկյան, ժամանակակից հայոց լեզվի ինաստաբանություն և բառակազմություն, էջ 194:

այլն: Այս բայերի արտահայտած իմաստները հաճախ համարժեք են ուղարկենի բայակերտ նախածանցներին, ինչպես՝ օ-բեզ-վոդ-ետք «ջրազրկել», օ-կայմ-իտք «եզրապատել», օ-լես-իտք «անտառապատել», օ-գրանիչ-իտք «սահմանազատել», թափանակ-իտք «փոշեցրել» և այլն²²: Ինչպես երևում է բերված օրինակներից, բայակազմությունը իրացել է հոդակապի միջոցով, և առանց **-ել** բայական վերջավորության սույն բայերի մի մասի հիմքերը հայոց լեզվում գործածական չեն: Իսկ մյուս մասը, առանց բայական մասնիկի, ածականներ են, որոնք փաստորեն անցում են կատարել բայական ձևերից, քանի որ *ասֆալտապատ* ածականի հասկացությունը չէր լինի, եթե չլիներ ասֆալտով պատելու գործողության հասկացությունը:

Անփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ ժամանակակից հայերենում գոյականի փոխակերպումը բայի կատարվում է **-ել**, **-անալ** մասնիկներով, սակայն առավել ակտիվորեն բայակազմությունը իրագործվում է **-ել** մասնիկով, որին երբեմն զուգորդվում են **-ավոր-**, **-ատ-**, **-արկ-** և **-վ-** ածանցները՝ հանդես գալով բայակազմական արժեքով: Փաստորեն բայական բառույթի իմաստը ձևավորվում է նախատիպ հիմքերի իմաստներին բայական վերջավորությունների և բայական ածանցների արտահայտած իմաստների հավելմանք: Բայակերտ վերջավորությանը նախորդող գոյականը կառուցվածքային տեսակետից որևէ սահմանափակում չունի. այն կարող է լինել պարզ, կարող է ունենալ բարդ և ածանցավոր բառերի զանազան կաղապարներ:

ЛУИЗА САРГСЯН – Существительное как глаголообразующая основа. – Глагол в армянском языке всегда морфологически маркирован. Как в личной, так и в безличной форме он обладает составной структурой, то есть имеет основу и глагольное окончание. Исследования показывают, что в процессе образования глаголов наиболее активное участие принимают именные части речи – существительные и прилагательные, с преобладанием существительных, т. к. появление названий новых общественно-политических явлений, научно-технических и культурных реалий обычно предшествует образованию глаголов, выраждающих соответствующие действия, т. е. новые глаголы появляются в основном путем вербализации существительных.

В современном армянском языке отыменные глаголы образуются по синтетическому или аналитическому типу словообразования. Глаголы аналитического типа представляет собой соположение (аппозицию) именных и глагольных компонентов и нередко обладают фразеологическим значением либо выражают действие описательным способом. В последнем случае аналитические глаголы могут иметь также соответствующие синтетические параллели (ср. Երդում տալ – Երդվել "(по)кляться", փորձ անել – փորձել "(по)пытаться"). Вербализация существительных по синтетическому типу осуществляется с помощью глаголообразующих частиц **-ել**, **-անալ**. Однако наиболее активно образование глаголов происходит посредством сочетания собственно глагольного окончания **-ել** с суффиксами **-ավոր**, **-ատ-**, **-արկ**, **-վ** (**-ավոր+ել**, **-ատ+ել**, **-արկ+ել**, **-վ+ել**), которые в данном случае выступают как глаголообразующие.

²² Տե՛ս Մանучарյան Բ. Ը. Словообразовательные значения и формы в русском и армянском языках. Еր., 1981, էջ 297-312:

LUIZA SARGSYAN – *Substantives as verb-forming stems.* – In the Armenian language, the verb is always morphologically marked. In personal, as well as in impersonal forms, the verb has complex structure, i. e. it is comprised of a stem and a verbal ending. The surveys showed that the nominal parts of speech – nouns and adjectives (especially nouns) more actively participate in the verbalization as the nomination of new objects and phenomena in science and politics, and cultural progress as a rule precedes the nomination of corresponding actions. In modern Armenian, the denominative verbs are formed by analytical and synthetic ways. Analytical verbs are juxtapositions of nominal and verbal components and often have phraseological value. There are also many analytical verbs that have a direct meaning and a descriptive form. The verbs, which have this kind of formation, possess parallel synthetic forms with similar roots, e. g. : Երդում տալ – Երդվել ‘to swear’, փորձ անել – փորձել ‘to try’. The synthetic denominative verbs are formed by the particles -ել, -անալ, but more actively by the particle -ել combined with the suffixes -ավոր-, -աս-, -արկ- and -վ- (-ավոր+ել, -աս+ել, -արկ+ել, -վ+ել) which have verb- forming values in this case.